

mandji (Սամանճեան), Boydan Markiewicz (Աստուածատուր Մարկոսեան) Լեհացի մ. 1796 Ապր. 22. Stephano Sahagiewic (Ստեփանոս Սահակեան) Լեհացի մեռած 1796 մայիս 6ին և այլն:

Տապան Սահակ վարդապետի Սոֆեան Եպիսկոպոսին Սատաղիոյ:

18. Արթուր հօտապետ հայր զորովական, Սահակ վարդապետ պրծնք. Սոֆեայեան: Զեղիա գրեալ վարժիչ Կիւլապեան. Ինքնավարժ փութով յառաջեալ յուսման: Գովելի վարուք առաքինութեան, Այցելու ընտրի վերար պատուական: Անարատ պաշտօն կալաւ ժրջան: Յաւէտ աղքատաց եղև ապաստան: Արդեամբ բարեկից յալիս ծերութեան Եսաւեալ առ հայր ութսուն հինգամեան: Զամի Տն. 1804 ի մայիսի 29

19. Հայր Եակովքոս Միխայրեան¹, վարդապետ մեծ տան Զամչեան: Ազնիւ ողկոյզ իմաստութեան, Ի ձոյլ հատից ըզգաստութեան: Ոսկիափայլ փող յորելեան (Բ) անին կենաց ճշմարտութեան: Համբերատար աշխատութեան: Յոգնավաստակ արիութեան: Սա հեղինակ օրագրութեան, Ազգիս մերոյ Աքսանազեան: Քաջ չափաբեր երկնից շարժման: Տումարագէտ ըստյոյկեան: Ութսուն երեք ամ լիութեան Խաղկեալ յիւրում կենդանութեան: Փոխի յաստեաց յերկնից կայան: Յնծալ ի լոյս արքայութեան: Զամի Տն. 1805 ի օգոստոսի 19

20. Ննջէ յայտ տապան, Զիշիկեայ կուսան. Բարեսէր վարուք, Աղքատաց օճան: Էր աղթասէր,

Առ մայր ցաւազին. Տենշայր տեսնել Ըզգառըս նորին: Ստուեր վարկանէր, Ըզկեանս աշխարհի. Յարէր ի խնդիր (վ)երին զաւտի: Փոխեցաւ յաստեաց Ամս եօթնասնի Նայցէ զօգնութիւն Միոյ հայր մերի 18...

21. Տապան Արեւելի Հալէպի Զատէ պարոն Կարապետին վէհանձն խոհմ ի գործ և ի բան. Խոնարհ բարեմիտ բազմաց օգնական Սիրելի բնաւից՝ զովեստից արժան Երբըս դժուարին հարտար քաջաշան: Իբր ամաց յիսնից յախտ շրջողութեան Անկաւ յեղակարծ անբժքչկական: Որով փոխեցաւ ի կեանս անվախճան, Կարօտեալ ահա հայր մերի միայն: Զամի Տն. 1805 նոյեմբեր 9

Հէլէպլու կամ Հալէպի (հալէպի) մեծահարուստ վաճառականներ ունեցած ենք որոնք 18րդ դարուն վերջերը խմբովին լատինացած են: Արդէն ընդհանրապէս աւարախօս, և անուներին ալ օտարահնչիւն՝ շատ դիւրութեամբ ուժացան թէ՛ իրենց ազգէն և թէ՛ իրենց պատկանած եկեղեցիէն: Այս վաճառականներէն կը յիշուին խօճա Մուսա (Մովսէս), խօճա Պութրոս, խօճա Ապտմէսի, խօճա Եղսուֆ և այլն և այլն:

Գ. ՀԱՍՏԵՐ

ՀԱՏԱՆՈՒՊ

Գերեզմանին վրայ բացուող ծաղիկներէն Հիւսէ՝ պըսակն երազներուն և պատրանքին. Եւ հողիկդ լուս միջոցին մէջ թող ձիւնեն Տատրակներուն թըղիքն և շողը լուսնակին. Ու քաղէ Յոյսը գաղտնօրէն ու ժպտագին Իբրև սաղաթք մը տրտմաւէտ նօճիկներէն...

ԱՐԱՎԷՊ-ԵՐԱՊ

1. Երէց եղբայր պատմաբան Հ. Միրայէ Զամչեանի, ծնած է Կ. Պոլսոյ մէջ 1724 մարտ 24ին: Ասոր նա խոժոնուութեամբն է որ վենետիկ Միքիթարեանները առաջին հայերէն Օրացոյցը հրատարակեցին 1767ին և կանոնաւորապէս կը շարունակեն հրատարակել մինչև այսօր: